ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25.11.2021 Ք. Իջևան

Նախագահ՝ Կ. Պ. Պողոսյան

Քարտուղար՝ Վ. Ա. Աղաբաբյան

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 24 անդամներից 22-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուստարվա առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում: /Զեկ. Կ. Պողոսյան/
2. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: /Զեկ.՝ ամբիոնների վարիչներ/
3. Հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների վերլուծության մասին: /Զեկ.՝ ամբիոնների վարիչներ/
4. Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ Կ. Պողոսյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա I կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփումը: Նշվեց, որ I ընթացիկ քննությունները և ստուգումներն իրականացվել են նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն: Քննություններն ու ստուգումները իրականացվել են լսարանային՝ առկա ձևաչափով: Ուսանողների կողմից հարցաշարերին վերաբերող խնդիրները լուծվել են ժամանակին, և տարաձայնություններ չեն եղել:

«Պատմություն» կրթական ծրագրի առաջին կուրսի 8 ուսանողից ‹‹Հայոց պատմություն-1›› առարկայից 1 ուսանող ստացել է 4 միավոր, 2 ուսանող՝ 3 միավոր, 2 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր, 2 ուսանող՝ չներկայացած: ‹‹Հին Արևելքի պատմություն›› առարկայից 1 ուսանող ստացել է 4 միավոր, 3 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր և 3 ուսանող՝ չներկայացած:

Երկրորդ կուրսի 14 ուսանողից ‹‹Միջին դարերի պատմություն-1›› առարկայից 4 ուսանող ստացել է 5 միավոր, 2 ուսանող՝ 4 միավոր, 3 ուսանող՝ 2 միավոր, 4 ուսանող՝ 1 միավոր և մեկ ուսանող՝ չներկայացած: ‹‹Հնագիտության հիմունքներ և Հայաստանի հնագիտություն›› առարկայից 10 ուսանող ստացել է 5 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր և մեկ ուսանող՝ չներկայացած: ‹‹Հայոց պատմություն-3›› առարկայից 4 ուսանող ստացել է 5 միավոր, 7 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր, 1 ուսամող՝ անբավարար և մեկ ուսանող՝ չներկայացած:

Երրորդ կուրսի 7 ուսանողից ‹‹ԽՍՀՄ-ի և Ռուս.-ի հետխորհրդ. շրջանի պատմ.›› առարկայից 2 ուսանող ստացել է 5 միավոր, 2 ուսանող՝ 4 միավոր, 3 ուսանող՝ 5 միավոր: ‹‹Նոր պատմություն-1›› առարկայից՝ 2 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ 2 միավոր, 3 ուսանող՝ չներկայացած : «Հայոց պատմություն-5» առարկայից՝ 4 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 2 ուսանող՝ չներկայացած:

Չորրորդ կուրսի 7 ուսանողից ‹‹Նորագույն պատմություն›› առարկայից 2 ուսանող ստացել է 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր և 3 ուսանող՝ 2 միավոր: ‹‹Հայոց պատմության պատմագրություն›› առարկայից 2 ուսանող ստացել է 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 4 ուսանող՝ 2 միավոր:

Անդրադառնալով ընթացիկ ստուգումներին՝ ամբիոնի վարիչը նշեց, որ առաջին կուրսի 8 ուսանողից ‹‹Նախնադարյան հասարակության պատմություն›› առարկայից 1 ուսանող ստացել է 7 միավոր, 2 ուսանող՝ 4 միավոր, 2 ուսանող՝ 2 միավոր, 3 ուսանող՝ չներկայացած: ‹‹Հայաստանի պատմական աշխարհագրություն›› առարկայից 1 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 2 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ անբավարար, 3 ուսանող՝ չներկայացած:

Երկրորդ կուրսի 14 ուսանողից ‹‹Գրաբար-1›› առարկայից 4 ուսանող ստացել է 8 միավոր, 1 ուսանող՝ 6 միավոր, 4 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ անբավարար, 2 ուսանող՝ չներկայացած:

‹‹Ազգագրության հիմունքներ և հայ ազգագրություն›› առարկայից 3 ուսանող ստացել է 9 միավոր, 3 ուսանող՝ 8 միավոր, 1 ուսանող՝ 7 միավոր, 2 ուսանող՝ 6 միավոր, 1 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ 2 միավոր, 2 ուսանող՝ չներկայացած: ‹‹Ռուսաստանի պատմություն-2›› առարկայից 2 ուսանող ստացել է 9 միավոր, 3 ուսանող՝ 8 միավոր, 3 ուսանող՝ 7 միավոր, 2 ուսանող՝ 6 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր և 3 ուսանող՝ չներկայացած:

Երրորդ կուրսի 7 ուսանողից ‹‹Պատմագիտության տեսություն և մեթոդաբանություն›› առարկայից 3 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 7 միավոր, 2 ուսանող՝ չներկայացած: ‹‹Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն›› առարկայից 1 ուսանող ստացել է 8 միավոր, 1 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 6 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր, 2 ուսանող՝ 4 միավոր:

Չորրորդ կուրսի 7 ուսանողից ‹‹Փիլիսոփայության պատմություն›› առարկայից 1 ուսանող ստացել է 9 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր, 1 ուսանող՝ 7 միավոր, 3 ուսանող՝ 6 միավոր, 1 ուսանող՝ 5 միավոր: ‹‹Վրաստանի և Ադրբեջանի պատմություն›› առարկայից 1 ուսանող ստացել է 10 միավոր, 2 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 5 միավոր, 2 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր:

Ամբողջացնելով առաջին ընթացիկ քննաշրջանի պատկերը՝ ստացվում է հետևյալը. ‹‹Պատմություն›› կրթական ծրագրով անցկացված ընթացիկ քննություններից ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է «Հնագիտության հիմունքներ և Հայաստանի հնագիտություն» /Գրիգորյան Ա., Պ II/ առարկայից՝ 4,00 միավոր, իսկ ամենացածրը՝ «Հին Արևելքի պատմություն» առարկայից՝ 1,38 միավոր /Ալեքսանյան Վ., Պ I/:

Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է «Փիլիսոփայության պատմություն» առարկայից՝ 6,71 միավոր /Մարիտիրոսյան Ռ., Պ IV/, իսկ ամենացածրը՝ «Նախնադարյան հասարակության պատմություն» առարկայից՝ 2,38 միավոր /Բեգինյան Լ., Պ I /:

Ընդհանուր առմամբ, ‹‹Պատմություն›› մասնագիտության I, II, III, IV կուրսերում ընթացիկ քննությունների միջին գնահատականը 5 հնարավոր միավորից կազմել է 2,89 միավոր, իսկ ընթացիկ ստուգումներինը՝ 10 միավորից՝ 4,94 միավոր:

Օտար լեզու և գրականություն մասնագիտության «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 1-ին կուրսում 30 ուսանողից «Լատիներեն» առարկայից 1 ուսանող ստացել է 10 միավոր, 5 ուսանող՝ 9 միավոր, 7 ուսանող՝ 8 միավոր, 4 ուսանող՝ 7 միավոր, 3 ուսանող՝ 6 միավոր, 4 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր, չներկայացած՝ 4 ուսանող: «Անգլերեն-1» առարկայից 2 ուսանող ստացել է 4 միավոր, 11 ուսանող՝ 3 միավոր, 8 ուսանող՝ 2 միավոր, 7 ուսանող՝ 1 միավոր, չներկայացած՝ 2 ուսանող: «Ֆրանսերեն-1» առարկայից 7 ուսանող ստացել է 5 միավոր, 6 ուսանող՝ 4 միավոր, 8 ուսանող՝ 3 միավոր, 3 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր, 1 ուսանող՝ 0 միավոր, չներկայացած՝ 4 ուսանող:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսում 19 ուսանողից «Լեզվաբանության հիմունքներ» առարկայից 5 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր, 2 ուսանող՝ 7 միավոր, 2 ուսանող՝ 6 միավոր, 2 ուսանող՝ 5 միավոր, 2 ուսանող՝ 4 միավոր, 2 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 0 միավոր: «Անգլերեն-3» առարկայից 3 ուսանող ստացել է 5 միավոր, 3 ուսանող՝ 4 միավոր, 4 ուսանող՝ 3 միավոր, 4 ուսանող՝ 2 միավոր, 3 ուսանող՝ 1 միավոր, 1 ուսանող՝ 0 միավոր: «Ֆրանսերեն-3» առարկայից 4 ուսանող ստացել է 5 միավոր, 4 ուսանող՝ 4 միավոր, 3 ուսանող՝ 3 միավոր, 3 ուսանող՝ 2 միավոր, 5 ուսանող՝ 1 միավոր:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսում 24 ուսանողից «Անգլո-ամերիկյան գրականություն» առարկայից 17 ուսանող ստացել է 10 միավոր, 2 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր, 1 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 0 միավոր, չներկայացած՝ 1 ուսանող: «Տեսական հնչյունաբանություն» առարկայից 4 ուսանող ստացել է 9 միավոր, 4 ուսանող՝ 8 միավոր, 5 ուսանող՝ 7 միավոր, 2 ուսանող՝ 6 միավոր, 2 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր, չներկայացած՝ 4 ուսանող, «Տեսական քերականություն» առարկայից 2 ուսանող ստացել է 8 միավոր, 4 ուսանող՝ 7 միավոր, 4 ուսանող՝ 6 միավոր, 3 ուսանող՝ 5 միավոր, 3 ուսանող՝ 4 միավոր, 3 ուսանող՝ 3 միավոր, 2 ուսանող՝ 2 միավոր, չներկայացած՝ 3 ուսանող: «Օտար լեզվի պատմություն» առարկայից 1 ուսանող ստացել է 8 միավոր, 3 ուսանող՝ 7 միավոր, 4 ուսանող՝ 6 միավոր, 4 ուսանող՝ 5 միավոր, 3 ուսանող՝ 4 միավոր, 4 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ 2 միավոր, չներկայացած՝ 4 ուսանող: «Անգլերեն-5» առարկայից 3 ուսանող ստացել է 5 միավոր,

1 ուսանող՝ 4 միավոր, 6 ուսանող՝ 3 միավոր, 7 ուսանող՝ 2 միավոր, 2 ուսանող՝ 1 միավոր, չներկայացած՝ 4 ուսանող: «Ֆրանսերեն-5» առարկայից 6 ուսանող ստացել է 5 միավոր, 6 ուսանող՝ 4 միավոր, 3 ուսանող՝ 3 միավոր, 3 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր, չներկայացած՝ 5 ուսանող:

Օտար լեզու և գրականություն 3-րդ կուրսի տեսական առարկաները /«Տեսական քերականություն», «Տեսական հնչյունաբանություն», «Օտար լեզվի պատմություն»/ բազմամբիոնային են, և գնահատման միավորները կիսվում են:

Օտար լեզվի պատմություն առարկայի միջին գնահատականը կազմում է 4.17: Ուսանողները ստացել են հետևյալ գնահատականները՝ 1 (9), 2 (5), 3 (4):

Տեսական քերականություն առարկայից ուսանողներն ունեն հետևյալ միջին գնահատականը՝ 4.33՝ 1 (9), 1 (6), 1 (4), 1 (3), 2 (2):

Տեսական հնչյունաբանություն առարկայի միջին գնահատականը կազմում է՝ 5.17՝1 (9), 2 (5), 3 (4):

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսում 10 ուսանողից «Երկրագիտություն» առարկայից 1 ուսանող ստացել է 10 միավոր, 3 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր, 2 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 6 միավոր, 1 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր, «Ոճագիտություն» առարկայից 3 ուսանող ստացել է 10 միավոր, 2 ուսանող՝ 8 միավոր, 2 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 6 միավոր, 1 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր: «Անգլերեն-7» առարկայից 3 ուսանող ստացել է 5 միավոր, 5 ուսանող՝ 3 միավոր, 2 ուսանող՝ 3 միավոր: «Ֆրանսերեն-7» առարկայից 1 ուսանող ստացել է 5 միավոր, 4 ուսանող՝ 4 միավոր, 2 ուսանող՝ 3 միավոր, 3 ուսանող՝ 2 միավոր:

Մասնագիտական մանկավարժություն մասնագիտության «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական խրագրի 1-ին կուրսում 14 ուսանողից «Ժամանակակից ռուսաց լեզվի հնչյունաբանություն» առարկայից 3 ուսանող ստացել է 10 միավոր, 5 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր, 1 ուսանող՝ 6 միավոր, 2 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր: «Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում-1» առարկայից 5 ուսանող ստացել է 9 միավոր, 5 ուսանող՝ 8 միավոր, 1 ուսանող՝ 7 միավոր, 3 ուսանող՝ 6 միավոր: «Լեզվաբանության ներածություն» առարկայից 1 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 5 ուսանող՝ 8 միավոր, 5 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր:

«Գրականագիտության ներածություն» առարկայից 8 ուսանող ստացել է 10 միավոր, 3 ուսանող՝ 9 միավոր, 3 ուսանող՝ 8 միավոր: «1-ին բուժօգն. և երեխաների առողջության պահպանման հիմունքներ» առարկայից 3 ուսանող ստացել է 10 միավոր, 6 ուսանող՝ 9 միավոր, 2 ուսանող՝ 8 միավոր, 3 ուսանող՝ 7 միավոր: «Ռուսաց լեզու և գրականություն» 2-րդ կուրսում 6 ուսանողից «Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում-3» առարկայից 1 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր, 1 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 5 միավոր, 2 ուսանող՝ 4 միավոր: «Անգլերեն-3» առարկայից 1 ուսանող ստացել է 6 միավոր, 1 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 2 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ 2 միավոր: «Ընդհանուր հոգեբանություն» առարկայից 2 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր, 1 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 6 միավոր: «Ժամանակակից ռուսաց լեզվի ձևաբանություն-1» առարկայից 1 ուսանող ստացել է 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 3 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 2 միավոր: «19-րդ դ. ռուս գրակ. պատմ.-1» առարկայից 4 ուսանող ստացել է 5 միավոր, 2 ուսանող՝ 4 միավոր:

«Ռուսաց լեզու և գրականություն» 3-րդ կուրսում 3 ուսանողից «Ռուսաց լեզվի պատմություն» առարկայից 1 ուսանող ստացել է 8 միավոր, 1 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր: «Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա» առարկայից 1 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր: «Արտասահմանյան գրակ. պատմ.-1» առարկայից 1 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր: «19-րդ դ. ռուս. գրակ. պատմ.-3» առարկայից 2 ուսանող ստացել է 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր: «Ժամանակակից ռուսաց լեզվի շարահյուսություն-1» առարկայից 1 ուսանող ստացել է 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր:

2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի 1-ին ընթացիկ քննություններից հետո «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության 1-4-րդ կուրսերի միջին գնահատականը ընթացիկ քննություններից կազմել է 2,89, իսկ ընթացիկ ստուգումներից՝ 6,10: Մասնագիտական մանկավարժություն /ռուսաց լեզու և գրականություն/ 1-ից 3-րդ կուրսերի միջին գնահատականը 1-ին կիսամյակի 1-ին ընթացիկ քննություններից հետո կազմել է 4,11, ընթացիկ ստուգումների միջին գնահատականը կազմել է 7,69:

2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի ընթացիկ քննություններից հետո «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 1-ին կուրսի «ֆրանսերեն-1» առարկայի միջին գնահատականը կազմում է՝ 4.17՝ 2 (5), 3 (4), 1 (3): «Անգլերեն -1» առարկայի միջին գնահատականը՝ 3.83՝ 1 (5), 4 (4), 1 (2):

Ֆրանսերեն 2-րդ կուրսի միջին գնահատականը «Ֆրանսերեն- 3» առարկայի համար կազմում է 3.17՝ 3 (4), 1 (2), «Անգլերեն- 3» առարակայինը՝ 3.50՝ 2 (5), 1 (4), 1 (3):

Ֆրանսերեն 3-րդ կուրսի միջին գնահատականը «Ֆրանսերեն- 5» առարկայի համար կազմում է 3.50՝ 1 (5), 1 (4), 3 (3), «Անգլերեն- 5» առարակայինը՝ 4.25՝ 2 (5), 1 (4), 2 (3), 1 (1):

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրով երեք կուրսերի՝ 37 (անվճար՝ 11, վճարովի՝ 26) ուսանողներ մասնակցել են 1-ին ընթացիկ ստուգումներին ու ընթացիկ քննություններին: Ընթացիկ ստուգումներից (առավելագույնը՝ 10,0 միավոր) ու ընթացիկ քննություններից (առավելագույնը՝ 5,0 միավոր) միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար ընթացիկ ստուգումներից 6.84 /վճ./ և 7.89 /անվճ./ միավոր, իսկ ընթ. քննություններից՝ 2.70 /վճ./ և 3.35 /անվճ./ միավոր:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ առաջին ընթացիկ ստուգումների ամենաբարձր միջին գնահատականն արձանագրվել է «Անտիկ և վերածննդի արտասահմանյան գրականության պատմություն», առարկայից /ՀԼԳ II/՝ 10.0, իսկ ամենացածրը՝ «Հայ և ընդհանուր դիցաբանություն» և «Հայերենի իմաստափոխությունը» առարկաներից՝ 4.63 /ՀԼԳ III/ միավոր:

Առաջին ընթացիկ քննություններից ամենաբարձր միջին գնահատականն արձանագրվել է «Հայ ժողովրդի բանահյուսություն» առարկայից /ՀԼԳ I/՝ 4.00 միավոր, իսկ ամենացածրը՝ «19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն» առարկայից /ՀԼԳ III/՝ 1.63 միավոր:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով ընթացիկ քննություններից ‹‹Ընդհանուր մանկավարժություն›› մասնագիտության երկրորդ կուրսի 22 ուսանողից ‹‹Մայրենի լեզու -1›› առարկայից 1 ուսանող ստացել է 5 միավոր, 5 ուսանող՝ 4 միավոր, 9 ուսանող՝ 3 միավոր, 6 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր: ‹‹Թվաբանության հիմունքներ›› առարկայից 7 ուսանող ստացել է 4 միավոր, 6 ուսանող՝ 3 միավոր, 9 ուսանող՝ 2 միավոր:

Երրորդ կուրսի 10 ուսանողից «Մաթեմ. դասավ. մեթոդիկա-2» առարկայից 4 ուսանող ստացել է 5 միավոր, 6 ուսանող՝ 4 միավոր։ «Մայրենի լեզվի դասավ. մեթոդիկա» առարկայից 4 ուսանող ստացել է 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 5 ուսանող՝ 3 միավոր։ «Հանրահաշվական կառույցներ» առարկայից 2 ուսանող ստացել է 5 միավոր, 3 ուսանող՝ 4 միավոր, 4 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ 2 միավոր։

Անդրադառնալով ընթացիկ ստուգումներին՝ զեկուցողը նշեց, որ առաջին կուրսի 18 ուսանողից «Հայոց լեզու և գրականություն-1» առարկայից 2 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 2 ուսանող՝ 8 միավոր, 4 ուսանող՝ 7 միավոր, 4 ուսանող՝ 7 միավոր, 7 ուսանող՝ 6 միավոր։ «Հոգեբան. հիմունքներ-1» առարկայից 2 ուսանող ստացել է 10 միավոր, 3 ուսանող՝ 9 միավոր, 6 ուսանող՝ 8 միավոր, 2 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 2 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած, 1 ուսանող՝ անբավարար։

«Մանկավ. հիմունքներ-1» առարկայից 1 ուսանող՝ 10 միավոր, 2 ուսանող՝ 9 միավոր, 2 ուսանող՝ 8 միավոր, 6 ուսանող՝ 7 միավոր, 3 ուսանող՝ 6 միավոր, 3 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած։

Երկրորդ կուրսի 22 ուսանողից «Շախմատի տես. և պրակտիկա» առարկայից 3 ուսանող ստացել է 10 միավոր, 3 ուսանող՝ 9 միավոր, 4 ուսանող՝ 8 միավոր, 5 ուսանող՝ 7 միավոր, 3 ուսանող՝ 6 միավոր, 2 ուսանող՝ 5 միավոր, 2 ուսանող՝ չներկայացած։ «Տարիքային հոգեբանություն» առարկայից 8 ուսանող ստացել է 9 միավոր, 10 ուսանող՝ 8 միավոր, 3 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած։

Երրորդ կուրսի 10 ուսանողից «Մայրենի լեզու-3» առարկայից 3 ուսանող ստացել է 8 միավոր, 3 ուսանող՝ 7 միավոր, 2 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր։ «Տեխնոլոգիա» առարկայից 1 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 5 ուսանող՝ 8 միավոր, 2 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 6 միավոր։ «Կերպարվ. դասավ. մեթոդիկա» առարկայից 4 ուսանող ստացել է 10 միավոր, 2 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 6 միավոր, 3 ուսանող՝ 5 միավոր։

Չորրորդ կուրսի 18 ուսանողից «Մայրենի լեզու-7» առարկայից 5 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 6 միավոր, 4 ուսանող՝ 5 միավոր, 5 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած։ «Մանկական գրական.» առարկայից 5 ուսանող ստացել է 10 միավոր, 1 ուսանող՝ 9

միավոր, 3 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող 6 միավոր, 3 ուսանող՝ 5 միավոր, 2 ուսանող՝ չներկայացած։

‹‹Կայուն զարգացման հիմն.›› առարկայից 7 ուսանող ստացել է 10 միավոր, 2 ուսանող՝ 9 միավոր, 3 ուսանող՝ 8 միավոր, 2 ուսանող 7 միավոր, 3 ուսանող՝ 6 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած։

«Հոգեբանություն» կրթական ծրագրի երկրորդ կուրսի 12 ուսանողից ‹‹Անձի հոգեբանություն›› առարկայից 1 ուսանող ստացել է 4 միավոր, 3 ուսանող՝ 6 միավոր, 1 ուսանող՝ 7 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր, 3 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր, 2 ուսանող՝ 10 միավոր: «Կրթության հոգեբանություն» առարկայից 12 ուսանողից 1 ուսանող՝ 9 միավոր, 11 ուսանող՝ 10 միավոր: Երրորդ կուրսի 7 ուսանողից «Քաղաքական հոգեբանություն» առարկայից 6 ուսանող՝ 10 միավոր, մեկ ուսանող էլ՝ չներկայացած: «Ռազմական հոգեբանություն» առարկայից 7 ուսանողից 6 ուսանող՝ 10 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած: 1-ին կուրսի ուսանողից 13 ուսանող «Հոգեբանության հիմունքներ» առարկայից 2 ուսանող ՝ 3 միավոր, 3 ուսանող՝ 4 միավոր, 3 ուսանող՝ 5 միավոր, 2 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած: «ԿՆՀ մորֆ. և ԲՆԳ ֆիզ.» առարկայից 13 ուսանողից 4 ուսանող՝ 1 միավոր, 5 ուսանող՝ 2 միավոր, 3 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած: Երկրորդ կուրսի 12 ուսանողից «Հոգեֆիզոլոգիա» առարկայից 12 ուսանողից 6 ուսանող՝ 5 միավոր, 3 ուսանող՝ 4 միավոր, 2 ուսանող ՝ 3 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած։ «Անձի տեսություն» առարկայից 12 ուսանողից՝ 2 ուսանող՝ 5 միավոր, 3 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր, 2 ուսանող՝ 1 միավոր, 3 ուսանող՝ 0 միավոր։ «Սոցիալական հոգեբանություն» առարկայից 12 ուսանող ստացել են՝ 5 միավոր։ «Հոգեբան. Խորհրդ. և պրակտ.» առարկայից 7 ուսանողից 5 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած։ «Հոգեախտորոշում» առարկայից 6 ուսանող՝ 5 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած։ «Զարգացման հոգեբանություն» առարկայից 2 ուսանող՝ 5 միավոր, 4 ուսանող՝ 4 միավոր, 1 ուսանող՝ չներկայացած։

Զեկուցողը հավելեց, որ նախորդ կիսամյակի համեմատ՝ քննական արդյունքները նվազել են: Ընթացիկ քննությունների պարագայում արձանագրվել է 3,05, իսկ ընթացիկ ստուգումների պարագայում՝ 6,51 միավոր։ Ուսանողների կողմից քննական գործընթացները չեն բողոքարկվել և անցկացվել են պատշաճ մակարդակով՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., ասիստենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ, դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները: Ներկայացվեց ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: Նշվեց, որ անհատական բեռնվածությամբ նախատեսված ավարտական աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաները, որոնք քննարկվել են ամբիոնային նիստերում, իսկ ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախաձեռնությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ: Նշվեց, որ ավարտական աշխատանքների թեմաները համապատասխանում են պահանջվող չափանիշներին, ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք արդիական են և հետաքրքիր:

Զեկուցողները նշեցին, որ յուրաքանչյուր ղեկավար ամսվա մեջ որոշակի գրաֆիկով կոնսուլտացիոն հանդիպումներ է ունենում ուսանողների հետ՝ ամբիոնի կողմից հաստատված ժամանակացույցով: Մտահոգություն հայտնվեց ավարտական աշխատանքների ընթացիկ վիճակի վերաբերյալ, քանի որ նոյեմբեր ամսվա վերջին ավարտական աշխատանքները դեռևս գտնվում են հետազոտական վիճակում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա ավարտական աշխատանքների ընթացիկ վիճակը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցող ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը ներկայացրեց ֆակուլտետում ուսուցանվող կրթական ծրագրի կողմից տրված հետազոտական բաղադրիչների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների վերլուծությունը: Զեկուցողը նշեց, որ մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից իրականացվել է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության» ամենամյա ուսանողական առցանց հարցում: Հարցմանը ներգրավված են եղել այն բոլոր կուրսերի ուսանողները, ովքեր ունեցել են հետազոտական բաղադրիչներ: Զեկուցողը նշեց, որ հարցման նպատակն էր պարզել, թե մասնաճյուղի ուսանողները որքանո՞վ են իրազեկված հետազոտական բաղադրիչների գործընթացներից, որքանո՞վ է մասնաճյուղը հասանելի հետազոտական բաղադրիչների տեղեկատվական հարթակներում ուսանողների համար: Հարցման նպատակն էր ոչ միայն բացահայտել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ուսանողների մոտ ի հայտ եկած խնդիրները, այլ նաև պարզել, թե նախորդ հետազոտական աշխատանքի կազմակերպումից, իրականացումից և խնդիրների վերհանումից և քննարկումներից հետո որքանո՞վ են լուծվել նախկին խնդիրները, որո՞նք չեն բարելավվել, և ի՞նչ նոր խնդիրներ են առաջացել:

Հարցաշարը ներառել է հարցեր, որոնց միջոցով նպատակ է դրվել պարզելու ուսանողների բավարարվածությունը.

1. հետազոտական աշխատանքների բովանդակությունից և ռեսուրսներից,
2. հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ղեկավարի աջակցությունից,
3. կատարած աշխատանքից,
4. հետազոտական աշխատանքի կազմակերպումից,
5. հետազոտական աշխատանքի գնահատումից:

Նշենք, որ հարցումն իրականացվել է անանուն և առցանց եղանակով: Հետազոտական աշխատանք կատարել են 62 ուսանող: Հարցման հղումը ստացել է 44 ուսանող, սակայն մասնակցություն է ունեցել ընդամենը 21 ուսանող /**48%**/: Սա, իհարկե, մասնակցության ցածր ցուցանիշ է և վկայում է ուսանողների վատ հետաքրքրվածության, պասիվության, մասնաճյուղային գործընթացների նկատմամբ անտարբերության մասին: Սակայն նշենք նաև, որ արդյունքները բավականին հուսադրող են՝ նախորդ կիսամյակի արդյունքների հետ համեմատած, ցուցանիշների աճի միտում կա, և նկատվում է ուսանողների հետաքրքրվածության և ոգևորվածության աճ հետազոտական աշխատանքների կատարման նկատմամբ: Հարցման միջոցով ուսումնասիրվող բոլոր գործընթացներում արդյունքները զգալիորեն բարելավված են:

Հարկ է նշել, որ հարցումը իրականացվում է միայն ֆակուլտետային բաժանմամբ, ինչի արդյունքում դժվարանում է ստացված տվյալների քննարկումը, քանի որ հստակ չէ՝ առկա առավելությունները և թերացումները արդյո՞ք վերաբերում են կոնկրետ կրթական ծրագրերի: Թեմաների ընտրությանը ուսանողներն ունեցել են անմիջական մասնակցություն, դասախոսները քննարկել են թեմաները յուրաքանչյուր ուսանողի հետ: Դասախոսները նաև բացատրել են ուսանողներին, որ իրենց անհատական աշխատանքների արդյունքները կարող են հետագայում կիրառվել իրենց ավարտական աշխատանքներում, քանի որ «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողներն ունեն հետազոտական բաղադրիչով դասընթացներ երրորդ և չորրորդ կուրսերում: Սա փաստում է նաև ներկայացված հաշվետվությունը, որ հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողների 57%-ի թեմաները եղել են իրենց նախասիրությունների շրջանակներում: Ամբիոնների նիստերի ժամանակ կարևորվել է հետազոտական աշխատանքներում գործնական հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքների խթանումը: Գոհացնող ենք համարում այն փաստը, որ հումանիտար գիտությունների ֆակուլտետի 6 ուսանող նշել է, որ իր հետազոտության արդյունքները կարող են կիրառվել դպրոցներում, 3-ը նշել է, որ կարող են տրամադրվել որպես ուսումնական նյութեր, 2-ը նշել է, որ իրենց աշխատանքը հետագա մասնագիտական գործունեության մի մասն է և գործնականում կիրառելի է:

Ուսանողներին առաջադրված հետազոտական աշխատանքների իրականացման բարդության տեսանկյունից կարող ենք նշել, որ, ինչպես ցույց են տալիս արդյունքները, ուսանողների 97%-ը հաղթահարել է և հասել ցանկալի արդյունքի. հումանիտար գիտությունների ֆակուլտետից միայն 1 ուսանող մինչև վերջ չի կարողացել հաղթահարել այն։ Ամբիոնների նիստերի ընթացքում առաջարկվել է թեմաների բաշխման ժամանակ հաշվի առնել նաև ուսանողի ընդունակությունը և ցուցաբերել անհատական մոտեցում, սակայն պահպանել բարդության ընդհանուր մակարդակը:

Ըստ իրականացված հարցման՝ հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողները բավարարված չեն հետազոտական մեթոդների ընտրության գործում, հավաքագրված տվյալների վերլուծությունների ժամանակ և մեթոդական նյութերի ընտրության գործում իրենց ղեկավարների աջակցությունից և գնահատել են, համապատասխանաբար, **3,8, 3,9 և 3,7** միջին գնահատականներով: Համեմատաբար բավարարված են աշխատանքի արդյունքների ձևակերպման ժամանակ ղեկավարների ցույց տված աջակցությունից՝ **4,2** միջին գնահատական։ Հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում ուսանողներն օգտվել են համացանցից: Դասախոսներին առաջարկվել է թեմաները հանձնարարելիս նաև ավելի հանգամանորեն բացատրել, թե որ կայքերից է առավել արդյունավետ օգտվելը, հնարավորության դեպքում տրամադրել նաև գիտական հանդեսներ և տեսական գրականություն: Սակայն սա ամենևին չի նշանակում, որ ամբողջ աշխատանքը պետք է իրականացվի դասախոսների կողմից, և ուսանողները որևէ կերպ չմասնակցեն անհրաժեշտ նյութի հայթայթմանը:

Ուսանողների ինքնուրույնության բավարարվածության հետ կապված ոչ այնքան բարձր ցուցանիշը հաղթահարելու համար առաջարկվեց ուսանողներին հնարավորություն տալ ոչ միայն քննարկել ղեկավարի կողմից առաջարկվող թեմաները, այլ նաև ներկայացնել իրենց սեփական թեմաները: Ինչ վերաբերում է հետազոտական աշխատանքներ գրելիս աշխատանքի նպատակի ու խնդիրների ձևակերպման և եզրակացություններ կատարելու դժվարություններին, ամբիոնների կողմից մշտապես իրականացվել են /ամբիոնի վարիչի և ծրագրի ղեկավարի կողմից/ իրազեկման դասընթացներ՝ գիտական աշխատանք գրելու հմտությունների վերաբերյալ: Որոշվեց նման դաս-քննարկում անցկացնել հատկապես

հետազոտական բաղադրիչով դասընթացներ ունեցող ուսանողների համար: Այն հարցին, թե արդյո՞ք աշխատանքները պետք է լինեն անհատական թե խմբային, քննարկման արդյունքում ևս մեկ անգամ տրվեց այն պատասխանը, որ անհատական իրականացումը ավելի չափելի է, և գնահատումն ավելի օբյեկտիվ է:

Գնահատման վերաբերյալ ունենալով ուսանողների կողմից բավարարվածություն՝ ևս մեկ անգամ ընդգծվեց, որ գնահատման չափանիշները պետք է ներկայացնել աշխատանքները կատարելու սկզբնական փուլից և անհրաժեշտության դեպքում կրկնել: Գնահատման ժամանակ անհրաժեշտ է հիմանվորել գնահատականը:

Կից ներկայացվում է ՄԿՈԱ բաժնի ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների վերլուծությունը /Հավելված 1/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հետազոտական բաղադրիչների ղեկավարները նշեցին, որ ամբիոններում քննարկվել է ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների վերլուծությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Մասնաճյուղի բավարարվածության ուսանողական հարցման արդյունքներ ընդունել ի գիտություն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Աղաբաբյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2020-2021 ուստարի, II կիսամյակ)

1. Ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի բովանդակությունից և ռեսուրսներից



Ըստ հարցման արդյունքների հարցմանը մասնակցած բոլոր ուսանողները կատարել և ներկայացրել են իրենց հետազոտական աշխատանքը (նախորդ կիսամյակում 2 ուսանող չէր ներկայացրել): Լիարժեք մասնակցությունն արդեն իսկ խոսում է պատասխանատու կառույցների և դասախոսների կողմից այդ գործընթացի հետևողական և ճիշտ կազմակերպման մասին, նաև ուսանողների կողմից այն կատարելու ցանկության մասին:



Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հետազոտական աշխատանք կատարելու առաջին կիսամյակի փորձն իր դրական և կողմնորոշիչ ազդեցությունն ունեցել է հետազոտական աշխատանքների թեմաների առաջադրման և ընտրման գործընթացում, չէ որ, օրինակ 3-րդ կուրսի ուսանողների համար այն արդեն 2-րդ փորձն էր, իսկ ահա 2-րդ կուրսեցիներն այն կատարել են առաջին անգամ, և ակնհայտ է այստեղ իր դրական դերն է խաղացել նաև դասախոսների ձեռք բերած փորձը: Այսինքն, պատասխանները բավականին գոհացնող են. ըստ հարցման արդյունքների հարցմանը մասնակցած ուսանողների **84%-ը** (57 ուսանող) փաստել է, որ մասնակցել է հետազոտական աշխատանքի թեմաների առաջադրմանը՝ արտահայտելով իր ցանկությունները և այն նկատելիորեն բարձր է նախորդ կիսամյակի արդյունքից: Ուսանողների այս ակտիվ մասնակցությունն իրենց ուսումնառության կազմակերպման գործընթացին փաստում է մասնաճյուղում ձևավորված և զարգացող ուսանողակենտրոն միջավայրի մասին: Այն փաստում է նաև ուսանողների մասնագիտական ձևավորվող կողմնորոշվածության, ապագա մասնագիտության նկատմամբ պահանջատիրական վերաբերմունքի և որպես մասնագետ կայացման մասին:

Ակտիվ մասնակցելով թեմայի առաջադրմանը և արտահայտելով նախասիրություններն ուսանողներն իրենց համար ապահովում են հետաքրքիր և նպատակային աշխատանք, իսկ ուսանող-դասախոս ակտիվ փոխհամագործակցության շնորհիվ բարձրացնում են իրենց ոլորտի արդի գիտական ուղղություններից և նվաճումներից տեղեկացվածության մակարդակը, փորձում են ներգրավվել գիտական գործընթացի մեջ:

Որպես այս նկատառումների հիմնավորում ներկայացնենք ուսանողների պատասխանները հետազոտական աշխատանքների թեմաների վերաբերյալ:



Ցանկացած աշխատանքից կարելի է ակնկալել լավ արդյունքներ, եթե կա մոտիվացիա և հետաքրքրություն: Ինչպես ցույց են տալիս արդյունքները, հարցմանը մասնակցած ուսանողների **43%-ի** (68 ուսանողից 29-ի) համար հետազոտական աշխատանքի թեման եղել է իր նախասիրությունների շրջանակներում (չմոռանանք, որ ուսանողները մասնակցել են թեմաների առաջադրմանը), **47%-ի** համար այն եղել է ուղղակի հետքրքիր թեմա, միայն **10%-ը** (7 ուսանող) այն կատարել է, քանի որ հանձնարարվել էր: Այս արդյունքներն իհարկե բարձր են, բայց ընդհանուր դեպքում: Մասնավոր դեպքում, հումանիտար գիտությունների և տնտեսագիտության ֆակուլտետների ուսանողների, համապատասխանաբար, 57%-ի և 48%-ի համար թեմաները եղել են իրենց նախասիրությունների շրջանակներում, իսկ բնական գիտությունների և կիրառական արվեստի ֆակուլտետներում այդ ցուցանիշները ցածր են և ուսանոնղերն այն կատարել են, որովհետև իրենց համար թեմաներն ուղղակի հետաքրքիր են եղել: Իհարկե այստեղ մտածելու խնդիր կա, որն է առավել ընդունելի և արդյունավետ, որ թեմաները լինեն նախասիրությունների շրջանակում, թե՞ ուղղակի հետաքրքիր:

Ամբիոնների վարիչներին և հետազոտական աշխատանքներ ղեկավարող դասախոսներին **առաջարկում ենք** ավելի նպատակային և մոտիվացիոն աշխատանք տանել ուսանողների հետ, ամբիոններում քննարկել թեմաների առաջադրման մոտեցումներ, որոշել կողմնորոշվածությունը և այլն:

Եվս մեկ անգամ անդրադարձ կատարենք հետազոտական աշխատանքների թեմաներին և ղեկավարների կողմից տվյալ թեմայի շրջանակներում ուսանողներից պահանջվող ուսումնասիրությունների կամ հետազոտությունների որակին: Հարցման միջոցով փորձել ենք պարզել, թե, ըստ ուսանողների, կատարված աշխատանքները պարունակել են արդյո՞ք հետազոտություն կատարելու տարրեր:

Դիագրամում ներկայացված արդյունքները ներկայացնում են ուսանողների կարծիքներն իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ: Ըստ 2-րդ կիսամյակի արդյունքների հարցմանը մասնակցած ուսանողների **84%-ի** (57 ուսանողի) կարծիքով իրենց կատարած աշխատանքն ամբողջությամբ հետազոտական է եղել, և այս



ցուցանիշն էապես բարձր է 1-ին կիսամյակի համապատասխան ցուցանիշից՝ 58%: Ըստ ուսանողների, 1-ին կիսամյակի աշխատանքներն ավելի շուտ եղել են ինքնուրույն աշխատանքներ:

Այս արդյունքները գոհացնող են, եթե դիտարկենք ուղղակի որպես արդյունքներ և վկայում են, որ կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ներառումն իսկապես կատարում է իր դերը և բակալավրիական կրթության մեջ հաջողությամբ մտնում է գիտական տարր, որն ուսանողներին հնարավորություն է տալիս ուսումնառության ընթացքում մտնել գիտության նախասիրած ոլորտ, բացահայտել իրենց ներուժը, հնարավորություն ստանալ կանխորոշելու իրենց ապագան և այլն:

Սակայն եթե մուտք գործենք պատասխանների բովանդակային մասի մեջ, ապա արդյունքների գոհացնող լինելու մասին կնշենք վերապահումով, որովհետև դրանք

ցույց են տալիս ուսանողների սուբյեկտիվ կարծիքները, միգուցե նաև նրանք արտահայտում են նրանց ղեկավարների միտումներն այդ հարցում: Հակված ենք վստահելու ղեկավարներին, որ նրանց հանձնարարած աշխատանքները հիմնականում պարունակում են հետազոտական տարր և ամենակարևորը, ուսանողներն ընկալում են դա, ինչը արտահայտված է 2-րդ կիսամյակի բարելավված արդյունքներում: Նշենք նաև, որ տնտեսագիտության ֆակուլտետի հարցմանը մասնակցած 25 ուսանողներից 24-ը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի 21 ուսանողներից 17-ը փաստել են, որ իրենց աշխատանքն ամբողջությամբ հետազոտական է եղել:



Այս ամենին հավելենք, որ ուսանողների **60%-ը** (նախորդ կիսամյակում 45%-ը) հնարավորության դեպքում կցանկանա շարունակել աշխատել այդ թեմայի ուղղությամբ, ինչը վկայում է, որ առաջադրվող թեմաներն իսկապես արդիական են և հետաքրքիր:

Ուսանողների **61%-ը** (41 ուսանող) նշել է, որ հետազոտական աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ նյութերը հիմնականում ձեռք է բերել համացանցից, այսինքն հիմնականում օգտվել են էլեկտրոնային գրադարաններից և պաշտոնական տվյալներ պարունակող կայքէջերից: Նրանց **22%**-ը նշել է, որ անհրաժեշտ նյութեր տրամադրվել են նաև դասախոսների կողմից: Հաշվի առնելով հետազոտական աշխատանքի մասնագիտական նեղ ուղղվածությունը, նաև գիտական ոլորտի նոր նվաճումները, նաև աշխատանքի կատարման համար անհրաժեշտ տվյալների լայն շրջանակը, մասնաճյուղի գրադարանային պաշարներից ուսանողների օգտվելու ցածր ցուցանիշը՝ **21%** կարելի է համարել արդարացված:

Ոսումնասիրելով հետազոտական աշխատանքների կատարման արդյունքում իրենց ձեռքբերումների վերաբերյալ ուսանողների կարծիքները, կարելի է համարել, որ մասնաճյուղը կատարել է իր առջև դրված խնդիրը՝ հասնելով անհրաժեշտ արդյունքի: Իրենց ձեռքբերումների վերաբերյալ ուսանողների բարձր գնահատականները վկայում են հետազոտական աշխատանքների իրականացումից նրանց բավարարվածության մասին:

Ուսանողների պատասխանները ցույց են տալիս, որ հետազոտական աշխատանքի իրականացումը նրանց տվել է նոր գիտելիքներ և զարգացրել է մասնագիտական և ընդհանրական կարևոր հմտություններ ու կարողություններ,





ընդորում 2-րդ կիսամյակի արդյունքներն զգալիորեն բարելավված են 1-ին կիսամյակի արդյունքների համեմատ:

Այս արդյունքներից որպես հետևություն կարևոր է արձանագրել այն հանգամանքը, որ ուսանողներն իրենք ընկալել, հասկացել և ընդգծել են իրենց մասնագիտական աճը, առաջընթացը և այլն: Օրինակ, հետազոտական աշխատանքի կատարման արդյունքում, ինչպես ցույց են տալիս վերևի դիագրամներում ներկայացված տվյալները, հարցմանը մասնակցած ուսանողների.

72%-ը (նախորդ կիսամյակում՝ 61%) ձեռք է բերել նոր գիտելիքներ, ընդորում այդ ցուցանիշը 2-րդ կիսամյակում բարելավվել են բոլոր ֆակուլտետների ուսանողների մոտ, բացի կիրառական արվեստի ֆակուլտետի,

70%-ը (նախորդ կիսամյակում՝ 68%) ձեռք է բերել վերլուծելու կարողություններ, ինչը շատ գովելի է և բավականին բարձր ցուցանիշ է, ընդորում այդ մասին փաստել են տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների 92%-ը, իսկ ահա հումանիտար գիտությունների և կիրառական արվեստի ֆակուլտետների ավելի քիչ ուսանողներ են



այդ կարծիքին, համապատասխանաբար՝ 57% և 43%, որոնք էապես ցածր են 1-ին կիսամյակի արդյունքներից,



68%-ը (նախորդ կիսամյակում՝ 64%) ձեռք է բերել ինքնուրույն աշխատելու ունակություններ, կարևոր գնահատական, ինչը վկայում է ուսանողների պատասխանատվության, ձգտումների և իրենց հետազոտության արդյունքների նկատմամբ հետաքրքրվածության մասին, այստեղ արդյունքները նվազել են կիրառական արվեստի և տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների մոտ:

67%-ը (նախորդ կիսամյակում՝ 51%) ձեռք է բերել մասնագիտական հմտություններ և այստեղ ուրախությամբ պետք է նշել, որ նախորդ կիսամյակի համեմատ այդ արդյունքները բավականին բարձր են, հատկապես կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների մոտ (1-ին կիսամյակում՝ 23%, 2-րդ կիսամյակում՝ 71%), իսկ ահա իրենց ձեռք բերած մասնագիտական հմտություններից





բավարարվածությունը նվազել է տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների մոտ, չնայած այն առանձնապես ցածր չէ, սակայն պետք է փաստել, որ նվազել է (1-ին կիսամյակում՝ 76%, 2-րդ կիսամյակում՝ 68%):

Նշենք, որ այս հարցման արդյունքները ևս մեկ անգամ բարձրաձայնում են մասնաճյուղի ղեկավարությանը և դասախոսական կազմին հուզող կարևոր խնդրի մասին. դա ուսանողների գործնական կարողությունների



ձևավորման ու զարգացման խնդիրն է: Այս հարցմանը մասնակցած ուսանողների միայն 64%-ն է նշել, որ հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում ձեռք է բերել գործնական կարողություններ: Սակայն դա մասնաճյուղային արդյունք է, որի վրա իր շատ մեծ ազդեցությունն է թողել կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների կարծիքը, նրանց միայն 14%-ն է գտնում, որ ձեռք է բերել գործնական կարողություններ, որն այդ ֆակուլտետի մասնագիտական ուղղվածության առումով անհասկանալի արդյունք է և կայուն, որովհետև այդ արդյունքը ցածր է եղել նաև նախորդ կիսամյակում: Իսկ ահա հուսադրող ցուցանիշ է գրանցվել բնական գիտությունների ֆակուլտետի ուսանողների կողմից, նրանց 80%-ը գտնում է, որ ձեռք է բերել գործնական կարողություններ, ընդորում այն կրկնակի բարձր է նախորդ կիսամյակի համեմատ:

Ամփոփելով ուսանողների ձեռքբերումների վերաբերյալ արդյունքները նշենք, որ դրանք գոհացնող են: Վստահ ենք, որ բոլոր ամբիոններում առանձնահատուկ ուշադրություն կդարձնեն հետազոտական աշխատանքների թեմատիկային և դրանց իրականացմանը, ներառելով անհրաժեշտ բոլոր կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված առաջադրանքներ ու պահանջներ: Վերևում ուսումնասիրված բոլոր կոմպետենցիաներն ապագա մասնագետի ձևավորման առանցքային գործոններն են, և դրանց անհրաժեշտության և առկայության մասին են փաստում և՛ արտաքին շահակիցները՝ որպես գործատուներ, թե ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները, և թե իրենք ուսանողները:

Ներկայացնենք, թե առաջադրված աշխատանքներն իրականացման տեսանկյունից ուսանողների համար ինչպիսի **բարդություն** են ունեցել:



Դիագրամից կարելի է ենթադրել, որ ի տարբերություն նախորդ կիսամյակի, 2-րդ կիսամյակում հետազոտական աշխատանքի իրականացումն առավելապես հենված է եղել ուսանողների ինքնուրույն աշխատանքի և ուսումնասիրությունների

վրա և առանձնապես հեշտությամբ չի տրվել նրանց: Սա վկայում է, որ ի տարբերություն նախորդ կիսամյակի, 2-րդ կիսամյակում դասախոսների կողմից ընտրվել են առավել հետաքրքիր և գիտահետազոտական թեմաներ, որոնք ուսանողներից պահանջել են ինքնուրույն ուսումնասիրելու և արդյունքներ ստանալու ջանքեր: Նման առաջընթացն իհարկե հասկանալի է, որովհետ նախորդ կիսամյակում եղել է հետազոտական աշխատանք կատարելու առաջին փորձը: Ինչպես ցույց են տալիս արդյունքները, ուսանողների 97%-ը հաղթահարել է և հասել ցանկալի արդյունքի, միայն 2 ուսանող (1-ական ուսանող բնական գիտությունների և հումանիտար գիտությունների ֆակուլտետներից) մինչև վերջ չեն կարողացել հաղթահարել:

Այստեղ, հետազոտական աշխատանքների բարդության տեսանկյունից մտահոգության խնդիր ենք տեսնում (վերապահումով) կիրառական արվեստի ֆակուլտետում, որովհետև հարցմանը մասնակցած 6 ուսանողներից 5-ն իր աշխատանքը կատարել է հեշտությամբ, նաև տնտեսագիտության ֆակուլտետում, որտեղ 24 ուսանողից 12-ն է հեշտությամբ կատարել իր աշխատանքը: Այստեղ չենք բացառու, որ հարցման մասնակիցներն ուղղակի լավ սովորող ուսանողներ են և այդ պատճառով հեշտությամբ են հաղթահարել աշխատանքը:

<u>Ամբիոնների ուշադրությունը հրավիրում ենք</u> այս փաստի վրա: <u>Առաջարկում ենք</u> ամբիոններում մշակել հետազոտական աշխատանքների թեմաների բարդության վրա դրվող չափանիշներ, որոնց մեջ միգուցե անհրաժեշտ է ներառել նաև ուսանողների հնարավորություններով պայմանավորված տարրեր և այլն:

Ուսանողների ակտիվ մասնակցությունը թեմաների ընտրությանը և նրանց կատարած մեծածավալ ինքնուրույն աշխատանքը, թեմաների խորությամբ ուսումնասիրությունը և թեմաների արդիականությունն ուսանողների մոտ վստահություն է առաջացրել իրենց ուժերի և հնարավորությունների նկատմամբ: Նրանք նշել իրենց կատարած աշխատանքների կիրառելիության մասին, նշել են նաև, թե որտեղ կարող են կիրառվել, մի քանիսն էլ նշել են նաև, թե ի՞նչ է դրա համար անհրաժեշտ: Օրինակ, հումանիտար գիտությունների ֆակուլտետի 6 ուսանող նշել է, որ իր հետազոտության արդյունքները կարող են կիրառվել դպրոցներում, 3-ը նշել են, որ կարող են տրամադրվել որպես ուսումնական նյութեր, 2-ը նշել են, որ իրենց աշխատանքը հետագա մասնագիտական գործունեության մի մասն է և

գործնականում կիրառելու են: Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները նշել են, որ իրենց հետազոտության արդյունքները կարող են կիրառվել մարզի զբոսաշրջության զարգացման համար, կարող են կիրառվել այն կազմակերպություններում, որոնց օրինակով իրականացրել են հետազոտությունը և այլն:

Ամփոփելով հարցման այս բաժնի արդյունքները կարելի է համարել, որ.

- ✓ ուսանողները բավարարված են հետազոտական աշխատանքի բովանդակությունից և իրականացման համար տրամադրված ռեսուրսներից, սակայն առաջարկումեն հնարավորինս լրացնել գրադարանային պաշարները մասնագիտական և գիտական գրականությամբ,
- ✓ նախորդ կիսամյակի համեմատությամբ հետազոտական աշխատանքները կազմակերպվել են ավելի բարձր մակարդակով,
- ✓ հետազոտական աշխատանք կատարած և հարցմանը մասնակցած ուսանողների գերակշիռ մասը ցուցաբերել է ակտիվություն և հետաքրքրվածություն աշխատանքի կազմակերպման և իրականացման գործընթացի նկատմամբ,
- ✓ հանձնարարված թեմաները հիմնականում եղել են արդիական, հետաքրքիր և մեծամասամբ պարունակել են հետազոտություն կատարելու տարրեր,
- ✓ ուսանողները ներգրավված են եղել թեմաների ընտրության գործընթացում,
- ✓ աշխատանքները եղել են ուսանողների կողմից հաղթահարելի և ուսանողներին տվել են նոր գիտելիքներ, զարգացրել նրանց տվյալներ հավաքագրելու, վերլուծելու, մտածելու, դատողություններ անելու և եզրակացություններ կատարելու կարողությունները:

2. Ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի ղեկավարի աջակցությունից

Ուսանողի հաջողության կարևոր գրավականներից են նրա ինքնակրթությունը և դասախոսների հետ արդյունավետ համագործակցությունը: Ուսանող-դասախոս

հաջող համագործակցությունը կապահովի արդյունավետ իրականացված հետազոտական աշխատանք: Այն ուսանողի համար կբացի ինքնուրույն գործելու և ստեղծագործելու լայն ասպարեզ, իսկ ղեկավարից կպահանջի սրտացավ և հետևողական աշխատանք:

Հետևաբար, հարցումը նպատակ ուներ պարզելու նաև ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի ղեկավարի աջակցությունից, մասնավորապես պարզելու, թե որքանով են ուսանողները բավարարված դասախոսի աջակցությունից.

1. հետազոտական մեթոդների ընտրության գործում,
2. վերլուծությունների կատարման ժամանակ,
3. գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում,
4. աշխատանքի արդյունքների ձևակերպման ժամանակ:

Ուսանողներն առաջադրված այդ հարցերին պատասխանել են՝ իրենց բավարարվածությունը գնահատելով 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր նիշն է, 2-ը՝ ամենացածր, իսկ 0-ն՝ դժվարանում են պատասխանել:

Նախորդ կիսամյակում դասախոսի աջակցությունը ուսանողները գնահատել են **3.7-3.9** միջին միավորներով: Այս արդյունքներն արդարացնում ենք այն հանգամանքով, որ նախորդ կիսամյակում առաջին անգամ է իրականացվել հետազոտական աշխատանք, որն անհարմարություններ է ստեղծել և՛ ուսանողների, և՛ դասախոսների համար, սակայն հակված ենք նշելու, որ մասնաճյուղն ընդհանուր առմամբ հաջողությամբ հաղթահարեց այդ գործընթացը և արդեն լավագույն փորձով



և պարզաբանումներով անցավ 2-րդ հետազոտական աշխատանքի իրականացմանը: Եվ 2-րդ կիսամյակում դասախոսների աջակցությունը ուսանողները բարձր են գնահատել՝ **4,3-4,4 միջին գնահատական:**

Սրանք միջինացված գնահատականներն են, ըստ ֆակուլտետների այդ արդյունքները դիտարկելիս առաձնանում են որոշ խնդիրներ։ Մասնավորապես.

- ✓ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողները **բավարարված չեն** հետազոտական մեթոդների ընտրության գործում, հավաքագրված տվյալների վերլուծությունների ժամանակ և մեթոդական նյութերի ընտրության գործում իրենց ղեկավարների աջակցությունից և գնահատել են, համապատասխանաբար, **3.8, 3.9 և 3.7** միջին գնահատականներով, և համեմատաբար բավարարված են աշխատանքի արդյունքների ձևակերպման ժամանակ ղեկավարների ցույց տված աջակցությունից՝ **4.2** միջին գնահատական։
- ✓ Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները **ցածր են գնահատել** գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում իրենց ղեկավարների ցույց տված աջակցությունը՝ **3.7** միջին միավոր։
- ✓ Տնտեսագիտության և բնական գիտությունների ֆակուլտետների ուսանողները **բավարարված են** իրենց ղեկավարների աջակցությունից և նրանց տված գնահատականները բավականին բարձր են՝ **4.4-ից 4.7** միջին գնահատականներ։

Ամփոփելով այս բաժնի բարելավված արդյունքները կարող ենք եզրակացնել, որ ամբիոններում քննարկվել են նախորդ հետազոտական աշխատանքի իրականացման հետ կապված մեր բարձրաձայնած խնդիրները, տրվել են լուծումներ։ Այս արդյունքները վկայում են, որ բարձրացել է դասախոսների հետևողականությունը, պատասխանատվությունը և ակտիվացել է համագործակցությունը ուսանողների հետ։ Հակված ենք մտածելու, որ այս բարձր գնահատականներն անուղղակի չեն ասում այն մասին, որ դասախոսներն աշխատում են ուսանողների փոխարեն։

Ամբիոններին, այնուամենայնիվ, **առաջարկում ենք** հետազոտական աշխատանքի իրականացման համար մշակել դասախոսի հստակ գործառույթները, աջակցության նորմեր և այլն։

3. Ուսանողի բավարարվածությունն իր կատարած աշխատանքից

Յուրաքանչյուր աշխատանք կարևորվում է ոչ միայն վերջնարդյունքով, այլ նաև թե ինչպիսի՞ ջանքեր են ներդրվել դրա իրականացման համար, և որքանո՞վ մարդը բավարարված է իր կատարած աշխատանքից և ձեռքբերումներից։

Հետազոտական աշխատանքների իրականացումը նպատակ ունի ուսանողների մոտ զարգացնելու ոչ միայն ստեղծագործելու, հետազոտելու և վերլուծելու կարողություններ, այլ նաև կատարած աշխատանքը գնահատելու և արժևորելու կարողություններ, դրսևորելու և զգալու սեփական հնարավորությունները, զարգացնելու խնդիրները տեսնելու և լուծելու ունակություններ, բարձրացնել ինքնագնահատականը և այլն։

Ուսանողների այդ զգացողությունները բացահայտելու համար այս հարցման շրջանակներում մի քանի հարցերի միջոցով փորձել ենք պարզել ուսանողների բավարարվածությունն իրենց կատարած աշխատանքից։ Այդ հարցերի պատասխաններն ուսանողները գնահատել են 5-միավորանոց սանդղակով, որտեղ 0-ն՝ դժվարանում եմ պատասխանել, 2 –ը՝ ամենացածր գնահատականը, 5 –ը՝ ամենաբարձր գնահատականն է։

Առաջադրված հարցերով փորձել ենք պարզել, թե որքանո՞վ է ուսանողների մոտ ստացվել ինքուրույն.

1. պլանավորել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքը,
2. ձևակերպել աշխատանքի նպատակն ու խնդիրները,
3. գնահատել թեմայի արդիականությունը և նշանակությունը,
4. հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը,
5. օգտվել անհրաժեշտ գրականությունից,
6. ներկայացնել ձեռք բերված արդյունքները,
7. ձևակերպել եզրակացությունը,
8. ներկայացնել կատարած աշխատանքը։

Նշենք, որ հարցմանը մասնակցած ուսանողների կողմից այս հարցերին տրված գնահատականների միջինը կազմել է **4.1-4.3** միավոր, որը էապես բարձր է եղել նախորդ կիսամյակի համապատասխան արդյունքներից (նախորդ կիսամյակում՝ **3.9-4.1**), և կարելի է համարել լավ արդյունքներ ու փաստել, որ նախ ուսանողները բավականին խիստ և խորությամբ են արտահայտել իրենց վերաբերմունքը սեփական

աշխատանքի նկատմամբ, սակայն զգացվել է առաջընթաց և բարելավում ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու նրանց մասնագիտական որակների մեջ: Հավելենք, որ հարցման բոլոր մասնակիցները հստակ են եղել իրենց որոշումներում և չեն դժվարացել պատասխանելուց:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների մոտ **բարելավվել է** հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքն ինքնուրույն պլանավորելու կարողությունները՝ **4,4 միջին միավոր:** Ըստ նրանց ինքնագնահատականների նրանց մոտ բարելավվել և ստացվել է ինքնուրույն գնահատել իրենց թեմայի արդիականությունը և նշանակությունը, ներկայացնել ձեռք բերված արդյունքները, օգտվել անհրաժեշտ գրականությունից, և իր ընկերներին ու ղեկավարին ներկայացնել իրենց կատարած աշխատանքները. **բոլորի միջին գնահատականը 4,3:**

Այստեղ, համեմատելով նախորդ կիսամյակի արդյունքների հետ և ուղղակի գնահատելով նոր հարցման արդյունքները կարելի է ֆիքսել ամբիոններում կատարված արդյունավետ աշխատանքը, ձևավորված մոտեցումներն ուսանողների հետ աշխատելու գործում և այլն: Բարելավված արդյունքները պայմանավորված են նաև նրանով, որ մասնակիցների և ղեկավարների մի մասը հետազոտական աշխատանք կատարում և ղեկավարում է երկրորդ անգամ, և դա ակնհայտորեն տվել է երկուստեք որոշակի հմտություններ և կարողություններ:







Այստեղ ուղղակի պետք է նորից առանձնացնել հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողների **<u>ցածր ինքնագնահատականները.</u>** դրանք ցածր են 4,0-ից բոլոր թվարկված կոմպետենցիաների առումով՝ **3,6-ից 3,9** միջին գնահատականներ և ակնհայտ է, այս ցածր գնահատականներն անդրադարձել են նաև ընդհանուր միջին գնահատականների վրա, այսինքն, եթե հումանիտար ֆակուլտետի գնահատականներն էլ բարձր լինեին, ապա մասնաճյուղային միջին արդյունքները ստացվածից ավելի բարձր կլինեին:

Իրենց ինքնուրույն աշխատելու որակներից բավարարված են տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները՝ կայուն **4,5-4,6** միջին գնահատականներ և բնական գիտությունների ֆակուլտետի ուսանողները՝ **4,3-ից 4,6** միջին գնահատականներ:

<u>Ամփոփելով հարցաշարի այս բաժնում</u> ներառված հարցերին ուսանողների տված պատասխանները՝ կարելի է փաստել, որ ուսանողները բավականին օբյեկտիվ և անաչառ են գնահատել հետազոտական աշխատանք կատարելու իրենց ինքնուրույն գործունեությունը: Եթե հաշվի առնենք, որ ինքնագնահատական տալը բավականին դժվար է, ապա հաճելի է նշել, որ դա մեր ուսանողների մոտ ստացվել է,

և այն եղել է նրանց կարողությունների սահմաններում: Ամբիոնների վարիչների ուշադրությունը հրավիրում ենք այս արդյունքների վրա: Ակնհայտ է, որ ուսանողների ինքնագնահատականներն արտացոլում են հետազոտական աշխատանքի կատարման ժամանակ ուսանողներին հանդիպած խնդիրներն ու դրանց հաղթահարման հետ կապված դժվարությունները:

Արդյունքները ցույց են տալիս, որ գրեթե բոլոր ֆակուլտետների ուսանողների մոտ դժվար է ստացվել աշխատանքի նպատակի ու խնդիրների ձևակերպումը և եզրակացություններ կատարելը: Առաջարկում ենք ամբիոններին ուսանողների համար կազմակերպել հանդիպում-քննարկումներ կամ հատուկ դասընթացներ թվարկված գործընթացների վերաբերյալ, այդ ամբողջ ծանրությունը չթողնել միայն հետազոտական աշխատանք ղեկավարող դասախոսների վրա: Անհրաժեշտության դեպքում կարելի է դիմել նաև կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնին՝ ուսանողների համար համապատասխան դասընթացներ կազմակերպելու համար:

4. Ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի կազմակերպումից

Հետազոտական բաղադրիչի ներառումը կոնկրետ դասընթացների ծրագրերում նոր խնդիրներ է առաջադրել ոչ միայն ուսանողների համար, այլ նաև այդ դասընթացներն իրականացնող դասախոսների համար, նաև ամբիոնների համար: Նրանք պետք է ապահովեն անհրաժեշտ պայմաններ ու միջավայր ուսանողների հետազոտական գործունեության արդյունավետ և հարթ կազմակերպման համար: Այդ գործընթացում ցանկացած թերացում և խնդրահարույց իրավիճակ, ակնհայտ է, կարող է նվազեցնել ուսանողի մոտիվացիան, ձախողել աշխատանքը և այլն: Վստահաբար կարող ենք փաստել, որ այդ գործընթացում ներգրավված բոլոր պատասխանատուներն աշխատել են նվիրումով և հաջողությամբ կազմակերպել ու աջակցել են ուսանողներին. այդ մասին են վկայում ուսանողների գնահատականները:

Հարցման շրջանակներում փորձել ենք պարզել, թե պատասխանատուները (ամբիոնը և հետազոտական աշխատանքների ղեկավարները) հետազոտական

աշխատանքի կազմակերպման ո՞ր ձևն են նախընտրել՝ անհատական աշխատանք, խմբային աշխատանք, կամ նրանց զուգակցում, և որքանո՞վ է տվյալ ձևն արդարացրել իրեն, և ի՞նչ կարծիքի են այդ մասին իրենք ուսանողները:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մասնաճյուղի դասախոսները հետազոտական աշխատանքների կատարման համար գերադասել են ուսանողների անհատական աշխատելու սկզբունքը: Հարցմանը մասնակցած ուսանողների **67%**-ը կատարել է անհատական աշխատանք, **18%**-ը՝ խմբայինի և անհատականի զուգակցումով աշխատանքներ, իսկ **15%-ը**՝ միայն խմբային աշխատանք: Նախորդ կիսամյակի համեմատությամբ 2-րդ կիսամյակում ղեկավարներն ավելացրել են խմբային աշխատանքների քանակը, դրանով նրանք ուսանողների մոտ ձևավորում են թիմում աշխատելու ընդհանրական կարողություններ՝ ապահովելով կրթական անհրաժեշտ վերջնարդյունքներ:



Նշենք, որ խմբային աշխատանքներ հիմնականում իրականացվել են բնական գիտությունների ֆակուլտետում, մյուս ֆակուլտետներում աշխատանքների **85%-ից 90%-ը** եղել են <u>անհատական աշխատանքներ</u>:

Իհարկե խմբային աշխատանքներն ուսումնառության կազմակերպման արդյունավետ մեթոդներ են և առավել ևս հետազոտական աշխատանքի նման ձևով իրականացումը ողջունելի է, սակայն ուսանողների կողմից աշխատանքի խմբային կազմակերպումն այդքան էլ բարձր չի գնահատվում, քանի որ խմբում աշխատանքի բաշխումը, աշխատանքի իրականացման տարբեր փուլերում խմբի բոլոր անդամների հավասարաչափ ներգրավումը լիարժեք չի ստացվում և աշխատանքի գնահատման ժամանակ դա ընդգծված դժգոհությունն է առաջացնում և՛ ուսանողների, և՛ դասախոսների մոտ:

Այնուամենայնիվ, ուսանողների **97%-ը** հետազոտական աշխատանք կատարելու իր համար ընտրված ձևը համարել է արդյունավետ՝ նախորդ կիսամյակի 85%-ի փոխարեն: Սա վկայում է, որ վերոնշյալ խնդիրները որոշակի լուծում արդեն ստացել

են, սակայն բաց հարցերում ուսանողները կրկին շեշտել են խմբային աշխատանքներում բեռնվածության ոչ հավասարաչափ բաշվածությունը:

Պատասխանների անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել երկու փաստով.

1. Կամ ուսանողները հետազոտական աշխատանքի կատարման տվյալ ձևի արդյունավետությունը գնահատել են իմիջիայլոց, շատ չխորանալով հարցի էության մեջ,
2. Կամ ուսանողները գտնում են, որ խմբային աշխատանքն արդյունավետ է, սակայն որաշակի շտկումների կարիք կա:

Իսկ ահա հարցման մասնակիցների **88%-ը (նախորդում՝ 77%)** փաստել է, որ իրենց ծանոթացրել են հետազոտություն կատարելու մեթոդաբանությանը, իսկ **1%-ը (նախկորդում՝ 4%)** նշել է, որ իրենց այն չի ներկայացվել:

<u>Ամփոփելով այս բաժնի</u> արդյունքները կարելի է ընդհանրացնել, որ ուսանողները բավարարված են աշխատանքի իրականացման համար ընտրված ձևերից, առավելապես անհատական աշխատելու ձևից:

Իսկ խմբային աշխատելաձևն արդյունավետ է, սակայն ամբիոններին առաջարկում ենք մշակել խմբային աշխատանքերի կատարման, աշխատանքների ներկայացման և դրանից հետևող աշխատանքների գնահատման այնպիսի չափանիշներ, որոնք կապահովեն խմբում աշխատանքային բեռնվածության հավասարաչափ բաշխում:

5. Ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի գնահատումից

Ուսանողի համար ցանկացած աշխատանքի ավարտն ամրագրվում է գնահատականով, որն արտահայտում է կոնկրետ նպատակի հասնելու համար նրա թափած ջանքերն ու ձեռքբերումները, հետևաբար դրանց օբյեկտիվ և ճիշտ գնահատումը ուսանողի մոտ մոտիվացիայի բարձրացման կարևորագույն պայմաններից է, նաև պետք է փաստենք, որ գնահատականն ուղղակի թիվ չէ:

Նշենք, որ մասնաճյուղում հետազոտական աշխատանքների կատարումն ու գնահատումն իրականացվում է ըստ համապատասխան կարգի՝ «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման» կարգը (ԵՊՀ ԳԽ 12.03.2020թ., որոշում թիվ 11/2), որի մասին տեղեկացնում են ուսանողներին: Իհարկե, գնահատման չափանիշները մշտապես հրապարակվում և ուսանողին հասանելի են դառնում բոլոր հարթակներում, սակայն դրանք ավելի ընկալելի են դառնում, երբ ներկայացվում են դասախոսի կողմից:

Մասնաճյուղն ապահովում է հետազոտական աշխատանքի կատարման և նրա գնահատման չափանիշների հրապարակայնությունը, սակայն հարցման միջոցով ցանկացել ենք պարզել, թե որտեղի՞ց են ուսանողները տեղեկացել հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշների մասին:

Նշենք, որ հարցման մասնակիցների **84%-ը** վկայել է, որ գնահատման չափանիշների մասին տեղեկացել է անմիջապես դասախոսից, **14%-ը** գնահատման չափանիշներից տեղեկացել է մասնաճյուղի կայքից, կամ կուրսընկերներից, իսկ **1%-ը** (նախորդ կիսամյակում 4%), տվյալ դեպքում 1 ուսանող բնական գիտությունների ֆակուլտետից՝ առհասարակ տեղեկացված չի եղել:

Ուսանողների **59%**-ի կարծիքով հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշները ճիշտ են ընտրված, իսկ **41%**-ի կարծիքով՝ մասամբ են ճիշտ:

Սակայն գնահատման գործընթացում ավելի կարևոր է, որ ուսանողի ձեռքբերումները գնահատվեն ըստ հաստատված չափանիշների, օբյեկտիվ և արժանահավատ, և ավելի կարևոր է, որ ուսանողները բավարարված լինեն գնահատումից և իրենց ստացած գնահատականներից:

Ստորև ներկայացված դիագրամից երևում է, որ բարելավվել է ուսանողների բավարարվածությունը գնահատման գործընթացից: Հարցմանը մասնակցած ուսանողների գրեթե **95%-ը** (64 ուսանող) բավարարված է իր ստացած



գնահատականից, այդ թվում **4.5%-ը** փաստել է, որ այն նույնիսկ բարձր է իր սպասումներից: Նման ուսանողների թիվը բավականին քիչ է, նշենք, որ 1-ական ուսանող բոլոր ֆակուլտետներից, բացի բնական գիտությունների ֆակուլտետի, ընդ որում նման ուսանողներ թիվը նախորդ կիսամյակի համեմատ բավականին նվազել է:

Այն հանգամանքը, որ մի քանի ուսանողներ արտահայտել են իրենց **անբավարարվածությունը** ստացած գնահատականից, անկախ նրանից, թե որքանով արդարացի են ուսանողներն այդ հարցում, ուրեմն **կա խնդիր**, որին պետք է ուշադրություն դարձնեն ամբիոններում: Սա նշանակում է, որ կամ գնահատման չափանիշները հասկանալի չեն եղել ուսանողներին, կամ նրանց լավ չեն մեկնաբանել իրենց կատարած և ներկայացրած աշխատանքի համար ձևավորվող գնահատականը:

Հերթական հարցով փորձել ենք պարզել, թե ըստ ուսանողների իրենց աշխատանքում հատկապես ի՞նչն է բարձր գնահատվել:

Ներկայացված դիագրամի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ուսանողների կողմից ներկայացվել են բավականին լավ կատարված աշխատանքներ:





Նախորդ կիսամյակի համեմատությամբ առավել ուշադրություն է դարձվել վերլուծություններին, տվյալների հավաքագրման կարողություններին, արդյունքների հիմնավորվածությանը և հավաստիությանը: Ընդհանուր առմամբ ուսանողների պատասխաններից կարելի է փաստել, որ նրանց աշխատանքները գնահատվել են՝ ներառելով թվարկված բոլոր տեսանկյունները, և ամենակարևորը, որ ուսանողների համար պարզաբանված և հստակ է եղել, թե իրենց աշխատանքում այդ կոմպետենցիաներից որոնք են հատկապես գնահատվել:

Դիագրամներում ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ գնահատելուց դասախոսներն առավել ուշադրություն են դարձրել ուսանողների ներկայացրած վերլուծություններին, այդ մասին փաստել են հարցմանը մասնակցած ուսանողների **79%**-ը, նաև ուսանողի ինքնուրույնությանը՝ **66%**:

Ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողները խնդիր ունեն տվյալների հավաքագրման և հավաքագրված տվյալների որակի հետ կապված, նաև նկատելի խնդիրն ունեն եզրակացությունների ձևակերպման հետ, ընդորում այն ցածր է նաև 1-ին կիսամյակի արդյունքից:

<u>Ամփոփելով հարցման այս բաժնի արդյունքները</u> կարել է եզրակացնել, որ հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշները հիմնականում ճիշտ են

ընտրված և գնահատականները նշանակվել են այդ չափանիշներին համապատասխան:

Ուսանողները տեղեկացված են գնահատման չափանիշներից, ունեն հստակ պատկերացում իրենց գնահատականի ձևավորման վերաբերյալ, ինչի արդյունքում բավականին բարձր է բավարարվածությունը:

Հետազոտական աշխատանքների ղեկավարներին **առաջարկում ենք** ուսանողների հետ տանել բացատրական աշխատանքներ, կազմակերպել հատուկ դասընթացներ և ներկայացնել տվյալների հավաքագրման մեխանիզմները և ճիշտ տվյալներ հավաքելու և վերլուծելու մեթոդները, ինչպես նաև ստացված արդյունքներից եզրակացություններ կատարելու մեթոդները, ուսանողների մոտ ձևավորել վերլուծելու և եզրակացություններ կատարելու հմտություններ, կամ աջակցել դրանց ձևավորմանը:

Ամփոփում

Արդյունքների վերլուծության ընթացքում մենք անդրադարձ կատարելով հետազոտական աշխատանք կատարելու տարբեր նրբություններին նշել ենք նկատված խնդիրները, որոշ դեպքերում ներկայացրել ենք նաև առաջարկներ այս գործընթացի բարելավման և ուսանողների մոտ հետազոտական աշխատանք կատարելու մասնագիտական կարողությունների զարգացման համար:

Բացի ընտրովի և գնահատականով հարցերից ուշադրության են արժանի նաև բաց հարցերին ուսանողների տված պատասխանները: Մասնավորապես, հետաքրքիր է նրանց կարծիքները կատարած հետազոտական աշխատանքների կիրառելիության մասին և ուրախալի է, որ ուսանողներն իրենց աշխատանքն աննպատակ չեն համարում և տեսնում են նրա կարևորությունը, կիրառելիությունը: Ակնհայտ է, կիրառելիություն ունեցող և արդիական թեմաներն օգնում են ուսանողներին հավատալ իրենց ուժերին և տեսնել իրենց ապագա գործունեության տիրույթը կամ ուղղությունը:

Հետազոտական աշխատանքների բարելավման նպատակով ուսանողների կողմից հնչեցվել են մի շարք առաջարկներ, որոնք ներկայացված են ըստ ֆակուլտետների, որպեսզի դրանք ունենան առարկայական քննարկումներ. նշենք որ այստեղ բավականին ակտիվ են եղել տնտեսագիտության ֆակուլտետի

ուսանողները: Այս գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերին առաջարկում են դիտարկել ուսանողների առաջարկները և հնարավորության ու տրամաբանության սահմաններում ներկայացնել լուծումներ կամ տարբերակներ:

	Գործ ընթաց	Առաջարկ	Ֆակուլտետ			
			ԳՖ /15	ԱՖ /7	ԳՖ /21	ԳՖ /25
	Տրամադրվող ժամանակ ա-հատված	Տրամադրել ավելի շատ ժամանակ				
		Այն առարկաները, որոնց ժամաքանակը քիչ է, չդնել հետազոտական բաղադրիչ				
	Կազմ ա-կերպում	Մեկ կիսամյակի ընթացքում չդնել 3 հետազոտական աշխատանք				
		Սահմանել ծավալի հստակ չափ				
		Հետազոտական բաղադրիչով դասընթացի համար հա-նել ընթացիկ ստուգումները և չտալ այլ հանձնարարություններ				
		Հետազոտական աշխատանքի համար տրամադրել տիտղոսաթերթի հստակ ձևաչափ				
	Թեմ ատիկա և մեթոդ	Ավելի շատ տեղ տալ խմբային աշխատանքներին				
		Հետազոտական աշխատանք հանձնարարել այն թեմաների շուրջ, որոնք տվյալ դասընթացի շրջանակներում չեն ուսումնասիրվում, բայց կապված են նրա շրջանակներում ուսումնասիրվող նյութերի հետ				

	Գնահատում	Նույն ծավալի և բարդության հետազոտական աշխատանքները գնահատել նույն բալային համակարգով				
		Աշխատանքը գնահատել 10 բալային համակարգով				
		Գնահատման համար ընտրել ավելի ճշգրիտ տարբերակ /չափանիշներ				
		Հետազոտական աշխատանքը գնահատել առանձին, ինչպես նախկինում կուրսային աշխատանքները:				
	Ընդամենը առաջարկ՝					

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին